ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/35

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 10.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.02.2021թ. թիվ 26/26/1406-2021 գրությամբ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 01.02.2021թ. թիվ Ե/40/203-21 գրության հիման վրա 04.02.2021թ. թիվ 26/26/1406-2021 գրությամբ նախաձեռնել է «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևայլը.

«2020թ. ապրիլի 7-ին «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքվել է Պոմպային ագրեգատ, Շարժիչապոմպ և Պոմպային ագրեգատների ձեռքբերման «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/20» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավել:

Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 5.2-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Պայմանագրի 5.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին ուղղված 07.08.2020թ. գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն նշված պայմանագիրը միակողմանի մասնակի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջները:

Այնուհետև, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար՝ այս

դեպքում արդեն իսկ 07.08.2020թ. լուծված 01/057 ծածկագրով պայմանագիրը լուծելով նաև 25.01.2021թ.:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, 2020թ. ապրիլի 7-ին «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև կնքվել է Պոմպային ագրեգատ, Շարժիչապոմպ և Պոմպային ագրեգատների ձեռքբերման «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/20» ծածկագրով պայմանագիր:

Վերը նշված պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 07.08.2020թ. գրությամբ միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով սույն Պայմանագրի 2.1.7 կետի պահանջները:

Գտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի միջև Պոմպային ագրեգատ, Շարժիչապոմպ և Պոմպային ագրեգատների ձեռքբերման նպատակով կնքված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/20» ծածկագրով պայմանագիրը ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ՝ հետևյալ հիմնավորմամբ.

Եվ այսպես, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է՝ պայմանագիրը լուծվել է 07.08.2020թ., բայց անհասկանալիորեն նույն տեքստով 25.01.2021թ. մակագրված գրությամբ պայմանագիրը Պատվիրատուի կողմից կրկին է լուծվել (ըստ երևույթի նպատակ ունենալով պահպանել Կարգի 45-րդ կետի պահանջները, քանի որ 07.08.2020թ. լուծելով պայմանագիրը՝ Պատվիրատուն մասնակցի տվյալները չէր ներկայացրել լիազոր մարմնին):

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում նաև հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է. Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է

www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ փաստում ենք, որ կողմերի միջև կնքված թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/20 ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանիորեն լուծման մասին ծանուցումը Հանձնաժողովի կողմից չի հրապարակվել www.gnumner.am կայքում:

Բավարար է ուսումնասիրել www.gnumner.am կայքի «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժինը, որպիսզի պայմաններում կհայտնաբերվի, որ այդպիսի ծանուցում այդ բաժնում հրապարակվել է միայն 26.01.2021թ., այնինչ Պայմանագիրը լուծվել է դեռևս 07.08.2020թ.:

Այսպիսով, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել նաև Պայմանագրի 8.9 կետի դրույթով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները /պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ/:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ վերը նշված հիմնավորումը ներառվել է նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից կայացրած ՍՑ-

ԼՕ-2019/180 և ՍՑ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգերի որոշման մեջ, որի արդյունքում ՍՑ-ԼՕ-2019/180 և ՍՑ-ԼՕ-2019/187 ծածկագրով ընթացակարգերի մերժվել են և «Գրիտիգ» ՍՊԸ-ն և «Արտ Պլաս» ՍՊԸ-ն չեն ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամփոփելով վերը նշված բոլոր փաստական հանգամանքները՝ կարող ենք փաստել, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից սույն գործի շրջանակներում թույլ են տրվել բազմաթիվ խախտումները, որոնք հանգեցրել են «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վտանգի առջև:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ի լրումն դիրքորոշման՝ Ընկերությունը 25.02.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն հայտնել ենք, 2020թ. ապրիլի 7-ին «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է Պոմպային ագրեգատ, Շարժիչապոմպ և Պոմպային ագրեգատների ձեռքբերման «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/20» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրը:

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին ուղղված 07.08.2020թ. գրությամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն նշված պայմանագիրը միակողմանի մասնակի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջները: Վերոհիշյալ գրությունը ստորագրվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Մ. Վարդանյանի կողմից:

Այնուհետև, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար՝ այս դեպքում արդեն իսկ 07.08.2020թ. լուծված 01/057 ծածկագրով պայմանագիրը լուծելով նաև 25.01.2021թ.:

25.02.2021թ. նշանակված թիվ ՍՑ-ՆԳ-2021/35 ծածկագրով ընթացակարգի քննության նիստի ժամանակ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից հարց բարձրացվեց, թե վիճարկվող պայմանագրի 07.08.2020թ. լուծման ծանուցումը ինչ եղանակով է Պատվիրատուի կողմից ուղարկվել ՍՊԸ-ին և ինչու չի այն հրապարակվել տեղեկագրում:

Վերը նշված հարցի հետ կապված հայտնում ենք, որ պայմանագիրը լուծվել է 07.08.2020թ. և նույն օրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պաշտոնական anpp@anpp.am էլ. փոստի հասցեից սույն ծանուցումը ուղարկվել է «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին պատկանող llckako@gmail.com էլ. հասցեին:

Վերոհիշյալ 07.08.2020թ. լուծման պաշտոնական գրությունը ստանալուց հետո «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն համարել է նշված պայմանագիրը լուծված և սպասել, որպեսզի նախաձեռնվելիք «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու գործընթացի ընթացքում ներկայացնի իր դիրքորոշումը և պաշտպանի իր իրավունքները, սակայն պայմանագիրը լուծելուց հետո գրեթե 5 ամիս նման ընթացակարգ չի նախաձեռնվել:

Այնուհետև, մեզ համար անհասկանալիորեն՝ պայմանագրի լուծումից հետո գրեթե 5 ամիս անց՝ 07.08.2020թ. լուծված պայմանագրի ծանուցման նույն տեքստով 25.01.2021թ. թվագրված գրությամբ պայմանագիրը Պատվիրատուի կողմից կրկին է լուծվել, ըստ երևույթի նպատակ ունենալով պահպանել Կարգի 45-րդ կետի պահանջները, քանի որ

07.08.2020թ. լուծելով պայմանագիրը՝ Պատվիրատուն մասնակցի տվյալները չէր ներկայացրել լիազոր մարմնին:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից և հաշվի առնելով Պատվիրատուի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում թույլ տալու փաստը, խնդրում ենք «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/35 ընթացակարգի շրջանակներում 11.02.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 3-4 աշխատանքային օրով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.02.2021թ. թիվ Ե/40/203-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «Պոմպային ագրեգատների» մատակարարման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի միջև 07.04.2020թ. կնքվել է N 01/057 պայմանագիրը:

Հաշվի առնելով, որ Պայմանագրի Հավելված N 1-ում 10-րդ չափաբաժնով նախատեսված 1 հատ PEDROLLO NK 4/5 PEDROLLO «Պոմպային ագրեգատը», որի մատակարարման ժամկետ էր սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օր, մինչև 06.06.2020թ. «Կա ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս չի մատակարարվել, 10-րդ չափաբաժնի մասով Պայմանագիրը միակողմանի լուծվել է, որի մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվել է 26.01.2021թ.»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/35 ընթացակարգի շրջանակներում 11.02.2021թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Պոմպային ագրեգատների» մատակարարման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի միջև 07.04.2020թ. կնքվել է թիվ «01/057» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված «Պոմպային ագրեգատը», «Շարժիչապոմպը» և «Պոմպային ագրեգատը (շարժիչի հետ միասին)», իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 10-րդ չափաբաժնով նախատեսված «Պոմպային ագրեգատ (շարժիչի հետ միասին)» ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրը:

3. Պատվիրատուն «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին ուղղված 25.01.2021թ. թիվ Ե/13/138-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/20» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված և առ 07.04.2020թ. Ձեր կողմից կնքված գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի միջև 07.04.2020թ. կնքված N 01/057 պայմանագրի հավելված N 1՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել էր պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում 06.06.2020թ. մատակարարել վերոհիշյալ պայմանագրով հաստատված

PEDROLLO NK 4/5 տեսակի պոմպային ագրեգատը 1,5 կՎտ հզորությամբ շարժիչով, որն առ այսօր չի մատակարարվել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ստիպված է միակողմանի լուծել պայմանագիրը համաձայն՝ վերոհիշյալ պայմանագրի 2.1.7 կետի և կատարել /պայմանագրի մասնակի լուծման վերաբերյալ/ 8.9 կետով ստանձնած պարտավորությունները»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 26.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2021թ. թիվ 26/26/1305-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 01.02.2021թ. թիվ Ε/40/203-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի միջև 07.04.2020թ. կնքվել է թիվ «01/057» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված «Պոմպային ագրեգատը», «Շարժիչապոմպը» և «Պոմպային ագրեգատը (շարժիչի հետ միասին)», իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 10-րդ չափաբաժնով նախատեսված «Պոմպային ագրեգատ (շարժիչի հետ միասին)» ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրը:

Պատվիրատուն «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին ուղղված 25.01.2021թ. թիվ Ե/13/138-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/20» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված և առ 07.04.2020թ. Ձեր կողմից կնքված գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի միջև 07.04.2020թ. կնքված N 01/057 պայմանագրի հավելված N 1՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել էր պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում 06.06.2020թ. մատակարարել վերոհիշյալ պայմանագրով հաստատված PEDROLLO NK 4/5 տեսակի պոմպային ագրեգատը 1,5 կՎտ հզորությամբ շարժիչով, որն առ այսօր չի մատակարարվել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ստիպված է միակողմանի լուծել պայմանագիրը համաձայն՝ վերոհիշյալ պայմանագրի 2.1.7 կետի և կատարել /պայմանագրի մասնակի լուծման վերաբերյալ/ 8.9 կետով ստանձնած պարտավորությունները»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 26.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>30 օրացուցային օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն իր և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի միջև 07.04.2020թ. կնքված թիվ 01/057 ծածկագրով պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում՝ պայմանագրի կնքման օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում, Պայմանագրի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույցի 10-րդ չափաբաժնով նախատեսված 1 հատ PEDROLLO NK 4/5 PEDROLLO տեսակի պոմպային ագրեգատը (շարժիչի հետ միասին) «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն չի մատակարարել Պայմանագրով նախատեսված՝ վերը նշված ապրանքը և ապրանքի մատակարարման ժամկետը խախտել է 30 օրացուցային օրից ավելի, որի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է Ընկերության դիրքորոշմամբ ներկայացված այն դիտարկմանը, որ Պայմանագիրը Պատվիրատուի կողմից լուծվել է 07.08.2020թ., բայց անհասկանալիորեն նույն տեքստով 25.01.2021թ. Ընկերությանը մակագրված գրությամբ պայմանագիրը Պատվիրատուի կողմից կրկին է լուծվել (ըստ երևույթի նպատակ ունենալով պահպանել Կարգի 45-րդ կետի պահանջները, քանի որ 07.08.2020թ. լուծելով պայմանագիրը՝ Պատվիրատուն մասնակցի տվյալները չէր ներկայացրել լիազոր մարմնին), ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, Ընկերության կողմից ներկայացված գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստով պայմանավորված, էլեկտրոնային նամակով դիմել է Պատվիրատուին՝ ներկայացնելու ՍՑ-ՆԳ-2021/35 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված թիվ 01/057 պայմանագրի լուծման վերաբերյալ 07.08.2020թ. ծանուցումը Տեղեկագրում հրապարակված լինելու վերաբերյալ տեղեկատվություն:

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի էլեկտրոնային նամակի՝ Պատվիրատուն տրամադրել է իր կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 26.01.2021թ. հրապարակված՝ Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին 25.01.2021թ. ծանուցումը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից 07.04.2020թ. կնքված թիվ 01/057 պայմանագրի միակողմանի մասնակի լուծման վերաբերյալ ծանուցումը Տեղեկագրում հրապարակված լինելու վերաբերյալ

տեղեկատվությունը և արձանագրել, որ Տեղեկագրում առկա է միայն 26.01.2021թ. հրապարակված՝ Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին 25.01.2021թ. ծանուցումը:

Այսպիսով՝ համաձայն Պայմանագրի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ***ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի*** «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:***

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով ***պայմանագիրն*** ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի ***լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում*** նշելով հրապարակման ամսաթիվը: ***Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:*** Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Եվ այսպես, վկայակոչված իրավակարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ Պատվիրատուն պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակում է Տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Ընդ որում՝ Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը Տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը Տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, երբ Պայմանագիրը կնքած անձը համարվել է Պայմանագիրը

միակողմանի մասնակի լուծելու մասին պատշաճ ծանուցված, այսինքն՝ 27.01.2021թ.-ից, իսկ Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, թիվ E/40/203-21 գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին 01.02.2021թ., որպիսի պայմաններում արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.02.2021թ. թիվ 26/26/1406-2021 գրությամբ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**